

ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ

պատմական գիտ. թեկնածու, ՀԱԻ

ՈՍԿԱՆ ԵՐԵԽԱՆՑԻՆ
ՈՒՇԻՒ Ս. ՍԱՐԳԻՍ ՎԱՆՔՈՒՄ

«Ժողովուրդների պատմության մեջ չի գտնվի մի ազգ, որ դեպի քաղաքակրթություն գնացող ճանապարհին հանդիպած լինի խոչընդոտների, տառապանքների եւ ծանր պայմանների, ինչպես հայը: Հազարամյակների վրա երկարող նրա կյանքը անփշուր չղթա է հաղթանակների եւ պարտությունների, մանավանդ դեպի լույս անգսպելի ձգտումի եւ խոյանքի»¹: Այս խոսքերը շատ դիպուկ են ասված եւ անառարկելիորեն վերաբերում են Ոսկան Երեւանցուն: Նա էր, որ իր ժամանակի քաղաքական ծանր իրավիճակում կարողացավ իրականացանել հայերեն Աստվածաշնչի առաջին տպագրությունը: Ոսկան Երեւանցին «հայ էր ազգով, զավակ բարեպաշտ ծնողների՝ Թորոսի եւ Գոհարազիզի, որոնք Շահ-Աբասի հալածանքների ժամանակ քաշվեցին Սպահան եւ այնտեղ մեծանալով ամուսնացան»²: Նրանցից ծնվեց Ոսկանը Հայոց 1063 (†551=1614 թ.) հունվար ամսին: Ծնողները նրան ուսման տվեցին... Ոսկանն ընտրեց կրոնավորի ճանապարհը: Նա աշակերտեց Նոր Զուղայի Ամենափրկիչ եկեղեցում հայկական տպագրության հիմնադիր կաթողիկոս Խաչատուր Կեսարացու կողմից բացված վանքի կրոնական դպրոցում... 1633 թ. կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցու կողմից կանչվում է Էջմիածին³: Թերեւս հենց այս պահից էլ կտրուկ փոխվում է Ոսկանի ճակատագիրը: Էջմիածնում նա ծանոթանում է դոմինիկյան վանական եւ գիտնական լատին Պողոս Փիլոմալիի հետ եւ հիանում նրա գիտելիքներով: Նրանից սովորում է լատիներեն, փիլիսոփայություն, երկրաչափություն, աստղաբաշխություն, քերականություն՝ փոխադարձաբար սովորեցնելով հայերեն: Կարճ ժամանակում Ոսկանը սկսում է լատիներենից թարգմանություններ կատա-

¹ «Աստվածաշունչը եւ Ոսկան Երեւանցին», Սիոն, 1966, թ. 2-3, խմբագրական Ա. Գ., էջ 53:² «Սիոն», 1966, թ. 2-3, էջ 127:³ Լ. Գ. Միսասյան, Ոսկան Երեւանցին եւ նրա տպագրական գործը, Սիոն, 1966, էջ 133-134:

րել: Նա ստանում է եվրոպական պատշաճ կրթությունն եւ դառնում է ջմիածնի միաբանությունից ուսյալ հոգեւորականներից մեկը: Այդ մասին նա համեստորեն գրում է. «Բայց այս բոլորը ոչ լիապես, ինչպես ինքը կկամենար, այլ փոքր չափերով»⁴: Ոսկանի գիտելիքները հաճելի չէին շրջապատին. նրան սկսում են արհամարհել: Լեոն, որ նույնպես ոգեւորված չէր Ոսկանի եւ նրա լատին ուսուցչի մտերմությամբ, խոստովանում է, սակայն, որ նրա վիճակում են եղել բոլոր նրանք, որոնք կրթություն էին ստանում՝ իրենց խավար հայրենիքին ծառայելու նպատակով⁵:

Արհամարհված Ոսկանը երբեք չի հուսահատվել. շարունակել է աշխատել, թարգմանություններ անել, քերականություն կազմել: Այդ մասին պատմիչը գրում է. «Բայց զնեղութիւնս կրեաց եւ կրէ՝ ի սուտակասպասից եւ ի բարձրայօնից իմաստակաց, յեկեղեցանաց եւ յաշխարհականաց, մերձակացից եւ հեռաւորաց. իսկ նա զչարչարանսն յանձին տարեալ ասէր. եթե տակաւին մարդկան հաճոյ լինիմ, ապա Քրիստոսի ծառայ ոչ եմ»⁶:

Գուցե այս ամենը պատճառ դարձավ, որ Ոսկան Երեւանցին առանձնացվեց Ուշիի Ս. Սարգիս վանքում: Նման գիտնականի համար այդ տեղը թերեւս այնքան էլ հարմար չէր, հատկապես որ վանքը կիսավեր վիճակում էր գտնվում: Ոսկան վարդապետը այս անգամ եւս չընկճվեց. վանքում սկսեց ծավալել շինարարական լայն գործունեություն, որի մասին պատկերավոր պատմում է Առաքել Դավրիժեցին⁷:

Ս. Սարգիս վանքը գտնվում է Արագածոտն մարզի Ուշի գյուղի հյուսիսարեւմտյան բարձունքի հարավային ստորոտում: Վանական համալիրի մասին առաջին վկայությունը պահպանվել է Հայսմափուրքում՝ Մեսրոպ Մաշտոցի կողմից Սուրբ Սարգսի նշխարները Ուշի տեղափոխելու եւ վանք հիմնելու կապակցությամբ⁸: Միջնադարյան պատմիչների գործերում Ուշիի վանքի եւ գյուղի մասին վկայությունները վերաբերում են ավելի ուշ շրջանին՝ հատկապես Ոսկան Երեւանցու վանահայրության ժամանակ շինարարական գործունեությանը (1654-1662 թթ.):

Ի դեպ, վիմագրագետ Ա. Մանուչարյանի արժեքավոր աշխատությունից տեղեկանում ենք, որ Գաբրիել վարդապետից հետո Սաղմոսավանքի

⁴ Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, Երևան, 1977, էջ 430:

⁵ Լեո, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1986, էջ 217-218:

⁶ Առաքել Դավրիժեցի, Գիրք Պատմութեանց, Յամսթեյօլամ, 1669, էջ 276:

⁷ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Երևան, 1988, էջ 278:

⁸ «Յայսմափուրք», Կոնստանդնուպոլիս, 1706, էջ 490. տե՛ս նաև Ֆ. Բաբայան, Ուշիի Սուրբ Սարգիս վանքը, Երևան, 2005, էջ 3-5:

առաջնորդ է եղել Ոսկան Երեւանցին: Պաշպանվել է 1661 թ. մի վկայագիր՝ գրված Սաղմոսավանքի առաջնորդ Ոսկան վարդապետ Երեւանցու կողմից⁹: Ոսկան Երեւանցուն վերաբերող այս տեղեկությունը նշված չի ոչ մի հեղինակի կողմից: Մ. Չամչյանը գրում է, որ Ոսկան Երեւանցի վարդապետը Ուշիում վանք է շինել, պարիսպ քաշել, ձեռնադրվել եպիսկոպոս եւ մեկնել Եվրոպա¹⁰:

Ս. Սարգիս վանքում Ոսկան Երեւանցու կատարած շինարարական աշխատանքները ցավոք չպաշպանվեցին 1827 թ. երկրաշարժի հետեւանքով: Վանքը ամբողջովին վերածվեց փլատակների:

1999-2001 թթ. Երեւանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Գերաշնորհ Տ. Շահե արք. Աճեմյանի մեկենասությամբ Ուշիի Ս. Սարգիս վանքում իրականացվեցին պեղումներ՝ ի հիշատակ մեծ գիտնական, Աստվածաշնչի առաջին հրատարակիչ Ոսկան Երեւանցու¹¹: Պեղումների ընթացքում պարզ եւ տեսանելի դարձան բոլոր այն վերանորոգչական ու կառուցողական աշխատանքները, որոնք ժամանակին իրականացրել էր Ոսկան Երեւանցին:

Մինչ պեղումներն սկսվելը, տարածքում առանձնանում էր միայն երկրաշարժից հետո մասնակի պաշպանված Սուրբ Սարգիս եկեղեցի-վկայարանը: Վերջինս միանավ, երկթեք տանիքով ուղղանկյուն շինություն է: Կառուցվել է հին բնակավայրի տարածքի շինություններից վերցված բազալտով: Հետագայում վկայարանը մի քանի անգամ վերանորոգվել է սրբատաշ բազմագույն տուֆով: Վկայարանի դռան վրա պաշպանվել է 1203 թ. վերանորոգման արձանագրությունը: Ըստ ավանդության՝ եկեղեցին կապվում է քրիստոնեական հավատքի համար նահատակված եւ սրբադասված Կապադոկիայի իշխան, հունական զորքերի հրամանատար Սարգիս զորավարի հետ (Դ.-Ե. դդ.): Սուրբ Սարգիս մատուռ-վկայարանի կողքին բացվել է Վաչե Վաչուտյանի կառուցած Ս. Աստվածածին կաթողիկե եկեղեցին: Թեեւ վերջինիս կառուցման մասին տեղում հիշատակություն չկա, սակայն ճարտարապետական հորինվածքով այն պատկանում է ԺԳ. դարասկզբին:

Այս եկեղեցին Ոսկան Երեւանցին տեսել է վթարային վիճակում, եւ ինչպես գրում է Առաքել Դավրիժեցին, չի կարողացել Ս. Աստվածածին

⁹ Ա. Գ. Մանուչարյան, Սաղմոսավանք, Երեւան, 2015, էջ 65:

¹⁰ Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ, Երեւան, 1984, էջ 648. տե՛ս նաեւ՝ Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 2948:

¹¹ Շահե սրբազանի մասին տե՛ս Շահե արք. Աճեմյան, Կյանքը եւ գործունեությունը, Երեւան, 2001:

եկեղեցու տանիքը վերականգնել, սակայն Հնարավորինս փորձել է այն փրկել սեփական միջոցներով: Գմբեթի կամարը պահող հարավային եւ հյուսիսային որմնամուկները երկարացրել է երկրորդական օգտագործման քարերով, ամրության համար մեջտեղում տեղադրել է գերաններ: Նրա անվան հետ են կապվում նաեւ պարսպի հյուսիսային պատի երկայնքով տեղադրված վանախցերը: Այդ շինությունների միջից հայտնաբերված՝ ԺԲ.-ԺԳ. դդ. թվագրվող խեցեղենը վկայում է նույն տեղում ավելի վաղ մշակութային շերտի գոյության մասին, որի վրա էլ Ոսկան Երեւանցու կողմից կառուցվել են նորերը: Գլխավոր մուտքից արեւմուտք՝ հարավային պարսպապատին կից, բացվել է տուֆով շարված կամարակապ սրահ՝ հինգ բաժանմունքներով: Հավանական ենք համարում, որ այն կառուցվել է իբրեւ հյուրատուն (հավաքատեղի), որտեղ տարբեր վայրերից ժամանած ուխտավորները տանտիրոջ կողմից համապատասխան ընդունելութային արժանանալուց հետո աստիճաններով բարձրացել են եկեղեցի՝ ծիսական արարողություններին մասնակցելու համար: Ոսկան Երեւանցին վերակառուցել է վանքի գլխավոր մուտքը, որի երկու կողմերի շարվածքի մեջ առկա են երկրորդական օգտագործման ոչ արձանագիր տապանաքարերի կտորներ:

Ամեն դեպքում մեծ է եղել Ոսկանի շինարարական գործունեությունը: Նա վերականգնել է ԺԷ. դ. մենաստաններին բնորոշ բարձր եւ խուլ պարիսպ, որը վանքը վերածել է պաշտպանական ամրոցի: Վանքի պարսպի շինարարության մասին վկայություն է պահպանվել նաեւ հիշատակարաններում. «...եւ առաջնորդ սրբոյս մեծ հռետորն եւ քաջ փիլիսոփան Ոսկան վարդապետն, որ եւ շինեաց պարիսպ ապառաժ վիմէ մեծածախ եւ գեղեցիկ շինուածովք է»¹²: Տարբեր գույնի տուֆ քարի համադրությամբ կառուցված հոգեւոր շինությունները չքեղ հարդարանք ունեցող չքամուտքերով, գմբեթներով, կամարակապ թաղածածկ սրահներով բնակելի, տնտեսական շինություններով առանձնանալու, ճգնելու, ապաշխարելու հրաշալի միջավայր են ստեղծել: Այդ մասին գրիչ Կարապետ Անդրեանացին 1657 թ. գրում է. «...յերկրիս Արարատայ, ի գաւառիս ցԱրագածոտան, նահանգիս Կարբւոյ, ի վայելուչ վանս, որ կոչի Յուշուոյ, Ս. Սարգիս, ընդ հովանեաւ սրօբէաճեմ եւ <եւ> քրօբէազարդ տաճարիս Աստուածածնի. եւ յաջակողմեան եկեղեցւոյն, ուր դամբարան է վերոգրեալ սրբոյն. եւ ձախակողմն կամարակապ եւ զարմանալի սբ. մատուանն: Դիտապետութեան ուխտիս տեառն Ոսկանի ամէնիմաստ բարունապետի Երեւանցոյ եւ թարգմանչի,

¹² «Հայերէն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԷ. դար», հ. Գ, Երեւան, 1984, էջ 917:



Նկ. 1. Պեղումներով բացված Ս. Սարգիս մատուռ վկայարանը
եւ Ս. Աստվածածին եկեղեցին



Նկ. 2. Վերականգնված Ս. Սարգիս մատուռ վկայարանը



Նկ. 3. Պեղումներով բացված Ս. Աստվածածին եկեղեցու շքամուտքը



Նկ. 4. Պեղումներով բացված Ս. Աստվածածին եկեղեցու բեմառեջը
և Ոսկան Երեւանցու կառուցած պարսպի մի հատվածը



Նկ. 5. Պեղումներով բացված Ոսկան Երեանցու կառուցած պարիսպը եւ նրա երկայնքով՝ վանախցերը



Նկ. 6. Ոսկան Երեւանցու կառուցած կամարակապ սրահը

որ ըստ դադմատականին եւ աշակերտաց սորին՝ վերագրեալ Կարապետի եւ տէր Մկրտչի կուսակրօն քահանայի, եւ սարկաւագացն՝ Յոհաննու եւ Դաւթի, եւ հոգաբարձութիւն տեղւոյս ըստ մարմնաւոր գործոց Կարապետի Կարբեւոյ կուրի եւ ծարագոյն տնտեսին խոհարարի»¹³:

Ոսկանը ձեռագրի հիշատակարանը ավարտում է Ուշիում եւ 1656 թ. գրում է. «Յոշոյ Ս. Սարգիս ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս գերահռչակած, որք են գերամբարձութեամբ երկնաքատակը կառուցեալք»¹⁴:

Նույն ժամանակներում էլ Մատթեոս Ծարեցին Ամստերդամում հիմնում է հայկական տպարան: Յավոք, նա իր տպագրական ձեռնարկումները պարտքով էր իրականացնում: Բախտորոշ մի օր, սակայն, հայտնվում է եւս մի նվիրյալ՝ Ավետիս Ղլիճենցը՝ Ոսկանի եղբայրը, ով օգնության ձեռք է մեկնում նրան: Նա այցելում է ծանր հիվանդ, պարտատերերից հալածված Ծարեցուն: Վերջինս Նոր Զուղայեցի վաճառականից դրամ է խնդրում տպարանի պարտքերը մարելու համար: Ավետիսը խոստանում է օգնել նրան մի պայմանով. տպարանը պետք է կրի «Ս. Էջմիածին» եւ «Ս. Սարգիս» անունը, իսկ եկամուտը նվիրաբերվելու է Ս. Էջմիածին եւ Ս. Սարգիս վանքերին¹⁵: Ղլիճենց Ավետիսը գիտեր, որ չէր կարող զբաղվել հրատարակչական գործունեությամբ, տպագրել Աստվածաշունչ եւ այլ բարձրորակ գրքեր: Միակ մարդը, որ կարող էր այդ գործով զբաղվել Ոսկան Երեւանցին էր: Վերջապես Աստվածաշունչը տպվում է Ամստերդամում: Բնագիրը Ոսկանը խմբագրել էր՝ ըստ լատինական Վուլգատայի, ինչի պատճառով էլ քննադատվեց հայերենը աղավաղելու մեղադրանքով¹⁶: Այդ մասին սակայն այսպես է գրում Զամչյանը. «Փոփոխեաց զհարադրութիւնս իւրաքանչիւր գրոց ըստ նոր ոճոյ ոմանց, բաց ի սաղմոսէն. թէպէտեւ յայն եւս հասոյց ձեռն որով եւ եղծաւ քաղցրութիւն քերթուածոց նոցին», զայս եւ ինքն Ոսկան գրէ՛ի վերջաբանութեան Աստուածաշնչին»¹⁷:

Այսուհետ Ամստերդամի «Ս. Էջմիածնի» եւ «Ս. Սարգսի» անվան տպարանում սկսեցին տպագրվել հայերեն գրքեր՝ «Յիսուս Որդի», «Սաղմոսարան», «Ժամագիրք», «Աստվածաշունչ» եւ այլն, որոնցով սկիզբ դրվեց անընդմեջ հայ գրահրատարակչությանը:

¹³ Անդ, էջ 750:

¹⁴ Անդ, էջ 695:

¹⁵ Գ. Լեւոնյան, Հայ գիրքը եւ տպագրության արվեստը, Երևան, 1946, էջ 104-113: Տես նաև Ռ. Իշխանյան, Հայ գրքի պատմություն, Երևան, 1977, էջ 417:

¹⁶ Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 435:

¹⁷ Մ. Զամչյանց, նշվ. աշխ., էջ 660:

РЕЗЮМЕ

Монастырский комплекс Сурб Саргис, расположенный на северо-западном холме села Уши Арагацотна впервые упоминается в агиографии в связи с переносом мощей св. Саргиса в Уши и основанием там монастыря Месропом Маштоцем. Другое упоминание относится к князю Ваче Вачутяну. Третье сообщение связано со строительной деятельностью великого оратора и философа печатника Воскана Ереванци (1654-1662 гг.), ярко описанной А. Даврижеци. В 1999-2001 гг. декан теологического факультета ЕГУ святейший архиепископ Шаге Аджемян спонсировал раскопки экспедиции Института археологии и этнографии НАН РА, в результате которых открылась вся картина строительства и реконструкции, произведенной Восканом Ереванци: высокая глухая крепостная стена, характерная для монастырей 17-го в., светские и религиозные сооружения из сочетания разноцветного туфа с роскошно орнаментированными парадными входами и арочными сводами, создававшие прекрасную среду для работы и покаяния, в которой родилось Евангелие Воскана Ереванци. Колофон рукописи датирован 1656 годом, а сама она опубликована в Амстердаме в 1666 г. Книги, изданные в амстердамской типографии Св. Эчмиадзина и монастыря Св. Саргиса ознакомили собой начало непрерывного армянского книгопечатания.

SUMMARY

The monastic complex of St. Sarkis, situated on the north-western hill of the village of Ushi, Aragatsotn region, is first mentioned in hagiographic literature by Mesrop Mashtots, in connection with the transfer of the relics of St. Sarkis to Ushi and foundation of the monastery there. Another reference is to the prince Vache Vachoutyan. The third record is associated with the construction activity of the great orator and philosopher Voskan of Yerevan (1654-1662) vividly described by Arakel of Tabriz. In 1999-2001 the Dean of the YSU Faculty of Theology Archbishop Shahe Ajemyan sponsored the excavations held by the expedition of the Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, which unclosed the entire picture of construction and reconstruction carried out by Voskan of Yerevan: high blank fortification, typical of the 17th century monasteries, secular and religious buildings erected with combination of multi-colored tuff, with luxuriously ornamented front entrances and arched vaults creating perfect environment for work and penance, in which the Gospel of Voskan of Yerevan was rewritten. The colophon of the manuscript dates back to 1656; however the book itself was published in Amsterdam in 1666. Books published in the Amsterdam printing house of Holy Etchmiadzin and the Monastery of St. Sarkis laid the cornerstone of the establishment and continuity of the Armenian printing culture.

